



ԲԱԶՄԱՎՀԵՊ

ՈՅԺԵ · 1867 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆգԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մեր նախնեացմէ ձեռուրնիս հասած ձիաքուժութեան երկու գրուածքներ :

Եթէ հայկական մատենագրութիւնը միայն տպագրութեամբ հրատարակուած քանի մը հաստ ու բարակ հատորներով ձևանար, անտարակոյս մենք ալ պիտի կարենայինք թարգմանիչներէն ետքն եկողները պարսաւել իբրև անուսումնասէրը, ինչպէս խորենացին այրած սրտովը կ'անուանէ իրմէ առջինները: Բարեբախտաբար կրնանք ուրախանալ որ բաց 'ի յիշատակեալ ընտիր գործքերէ որոնց թիւը շատի կ'ելլէ և ինչուան հիմա յայտնուած չեն, անշուշտ Ալփասլաններու, լէնկթիմուրներու վանդալական կատաղութեանը զոհ եղած, կամ մեր աւերակաշատ հայրենեաց մէկ ծակը մէկ խորշը թաղուած յնջագիր և ճճեկեր, տակաւին կան մընան անտիպ անհամար գրուածք եթէ թարգմանութիւն և եթէ հեղինակութիւն որ հաւասարապէս կը փառաւո-

րեն ազգային դպրութեանց հին, միջակ և յետին ժամանակները: Հնութեան յարգը ճանչցող ճշմարիտ հայրենասիրին համար անկէ աւելի դառն վիշտ կը նայ ըլլալ երբ կը լսէ որ ազգային պարծանքները, ազգային հանճարը պատուող և իրեն բարգաւաճանքը ցուցնող յիշատակարանները հետզհետէ կը կողոպտուին օտարազգիններէ, որպէս զիեւրոպայի թանգարանները ճոխացնեն. Հապա ինչ ըսենք երբ աղիտաւոր գիպուածք ալ դաւակից ըլլալով այնպիսի սակաւագիւտ և անգին գանձերը պահողներուն տղիտութեանը կամ անհոգութեանը, երբեմն կրակով, երբեմն փառութեամբ, երբեմն ծովասոյզ, երբեմն ալ մոլեգին խառնիճաղանճէ մը պատառ պատառ ըլլալով՝ ալ աւելի կը մերկացնեն մեր դպրութեանց արդէն իսկ վտիտ պսակը: ինչուան որ

գայ այն երջանիկ օրը յորում նախ-
նեացմէ մնացած բովանդակ զրուածքն
զարթնով մատենադարաններու խոր
քնէն, միանգամայն 'ի լոյս ելլան վայե-
լուչ տպագրութեամբ, և հուսկ ուրեմն
ազատին կամ կորսուելու կամ փճա-
նալու անձողովրելի դատապարտութե-
նէն, մենք չենք դանդաղիր ատեն ատեն
հրատարակելու ձեռուրնիս ունեցած
նախնեաց գրուածքներէն աւելի հետա-
քրքրական երևացածները: Թերես ուրիշ
մշակեալ լեզուներէ շատ վար չմնար
մեր լեզուն ալ բուսաբանութեան, կեն-
դանաբանութեան, մարդակազմութե-
և մանաւանդ բժշկութեան բառերու
կողմանէ, որոնք հարիւրով հազարով
կը գտնուին միայն բժշկարաններուն
մէջ, և որոնց զիսաւոր հեղինակքն են
Մխիթար Հերացի, Ամիրտոլվաթ Ամա-
սիացի, Ասար Սեբաստացի և Ստեփա-
նոս՝ Ահարոն բժշկին որդին: Կիսկա-
տար ծանօթութեամբ զոր ունինք լե-
զուներնուս բովանդակ հարստութեա-
նը՝ շատ անգամ 'ի զուր կը յօդնինք
նորանոր բառեր ստեղծելու (որոնց ըս-
տէալ կը պակսի ալ արուեստը և վա-
յելլութիւնը), մինչդեռ նախնիք ար-
դէն մեզմէ առաջ անուանած և բացա-
տրած են զանոնք, ոչ եթէ մէկ՝ այլ
երբեմն նաև երկու երեք զանազան բա-
ռով^{1:}: Աս անգամ ընծայենք 'ի վայելս

¹ Օրինակի համար յիշենք ինքարոյս բառը որ
վերջն ժամանակներս յարմարցուած է թարգ-
մանելով Տաճկին Կիբար Առաջածը փոխանակ
հին խոնրէ բառին (գլ. Dictame). ոմանք բաւ-
նի կոչած են րիօն խոռոը որ, ըստ մեր բժշկարա-
նաց կ'ըսուի պէտականայութ: Asthme ըսուած հի-
ւանդութեան դժուարացնութիւն, ծանրացնութիւն
հասարակ անունը արուած է, մինչդեռ հիները
կ'ըսեն վայ: Étamine ծալիկներուն արու գոր-
ծարանը ըստ նախնեաց կ'ըսուի որչայ, զոր մենք
անուանած ենք առէլք: Basterne ըսուած Դ գա-
րու գեսապակին արուած չէ հայկական անունը
բառիկն զոր գործածած են Ոսկեբերանի թարգ-
մանիցիւ Եղիշէ, գեսպակի և չէ թէ գանքէի մըտ-
քով, և այն և այն: Խակ մի և նոյն բառին այլ և
այլ անուններ ունենալուն համար յիշենք միայն
պայի վելան որ կ'ըսուի Սոսորդ, Լեզուակ, Մա-
կալեզու (յունական), Խաղողիկ, Զանգիկ, Խըն-
ծորք, Զանձողիք, Կատիկ որ և Գթիկ: Դեռ ու-
րիշ շատ օրինակներ ալ կան, զորոնք համասո-
տութեան համար զանց կ'ընենք յիշել:

բանասիրաց ձիաբուծութեան վրայ
գրուած երկու փոքրիկ հատուածներ,
որոնցմէ մէկը կ'երևի թէ գաղղիերէնէ
թարգմանուած է մէջը նոյն լեզուով
գտնուած այլ և այլ բառերուն համար,
իսկ միւսը ըստ ամենայն հաւանակա-
նութեան՝ յարաբերէնէ: Առաջինը մա-
գաղաթի վրայ մաքուր գրուած տետ-
րակ մըն է որ դժբաղդաբար կը պակսի
մէջտեղէն և վերջէն. երկրորդը շատոն-
ցուընէ ծանօթ վաստակոց գրքէն է^{1:},
Մեր գիտութենէն դուրս մնացած բա-
ռերը զորոնք չկրցանք ճշդել կը ձգենք
հմտագունից:

Հ. Յ. Թ.

Ի գրաստուն բժշկարանէն փոխած.

Ա. Յաղագս կաղնալոյ.

Գրաստուն կաղալն երկու ցեղ է. է
որ 'ի ծածուկ կաղայ և է որ յայտնի.
և որ կամենա ճանաշել այս է նշանքն.
որ 'ի մէկ ոտիցն կաղայ՝ նա 'ի զիսոյն
շարժելն ճանշուի և 'ի կալօփցնելն^{2:}.
և յորժամ հալծեցնեն զձին և կանգնե-
ցնեն որ պաղէ և ձեռօք վնդուն յերին
և 'ի ծունկըն և 'ի կոճքն և 'ի սմբակըն

1 Անցայս ձեռագիրներու կարգը պէտք է գա-
մենք նաև ձիերուն պայտ զարնելու արուեստին
վրայ գրուած՝ մանաւանդ թէ ձից խօսելով
թարգմանուած գիրք մը զոր կը յիշատակէ Բա-
րիզու կայսերական մատենադարանին մէջ պա-
հուած Քիաբէտնութիւն անունով նօարագիր գըր-
քոյկ մը. « Եւ այս խրատնիս այլ 'ի հետ պող-
պատ շննելուն և մուս տալուն էր գրած 'ի նոյն
իմաստասիրացն Պարսից, զոր թարգմանեց Հե-
թում թագաւորն հայոց յորժամ գնաց ութե-
ասն հազար հեծելով 'ի վրայ թշնամոյն Սուլ-
տանին և կոտորեաց և սպառեաց զամենեսին, և
գնաց մեծաւ պատվով 'ի Պաղատատ առ Կսոր խա-
լիքայն և մեծ պարգևօք գարձաւ. և իմաստասէր
ոմն սարկաւագ Ստեփանոս անուն գտեալ առ
կայրն որ այնչափ ազգի ազգի գիր և լեզու ու-
սեալ նման առաջի փիլիսոփայիցն և ոչ կայր գիր
որ առ նմայ ոչ գտանէր. և նա սիրեցեալ եղե 'ի
հայոց թագաւորէն վասն հզօր գիտութեան, և
խնդրեաց յարբայէն և ետ թարգմանել երեք
գիրս վասն ձիյ պայշթարսման և վասն թրի շնն-
ցաւ և վասն արեգական և լուսնի արվեստին, և բե-
րեալ 'ի հայոց աշխարհս»:

2 Գլ. Galoper ձին շրս ոսքով վազնելն է:

գայ այն երջանիկ օրը յորում նախ-
նեացմէ մնացած բովանդակ զրուածքն
զարթնով մատենադարաններու խոր
քնէն, միանգամայն 'ի լոյս ելլան վայե-
լուչ տպագրութեամբ, և հուսկ ուրեմն
ազատին կամ կորսուելու կամ փճա-
նալու անձողովրելի դատապարտութե-
նէն, մենք չենք դանդաղիր ատեն ատեն
հրատարակելու ձեռուրնիս ունեցած
նախնեաց գրուածքներէն աւելի հետա-
քրքրական երևացածները: Թերես ուրիշ
մշակեալ լեզուներէ շատ վար չմնար
մեր լեզուն ալ բուսաբանութեան, կեն-
դանաբանութեան, մարդակազմութե-
և մանաւանդ բժշկութեան բառերու
կողմանէ, որոնք հարիւրով հազարով
կը գտնուին միայն բժշկարաններուն
մէջ, և որոնց զիսաւոր հեղինակքն են
Մխիթար Հերացի, Ամիրտոլվաթ Ամա-
սիացի, Ասար Սեբաստացի և Ստեփա-
նոս՝ Ահարոն բժշկին որդին: Կիսկա-
տար ծանօթութեամբ զոր ունինք լե-
զուներնուս բովանդակ հարստութեա-
նը՝ շատ անգամ 'ի զուր կը յօդնինք
նորանոր բառեր ստեղծելու (որոնց ըս-
տէալ կը պակսի ալ արուեստը և վա-
յելլութիւնը), մինչդեռ նախնիք ար-
դէն մեզմէ առաջ անուանած և բացա-
տրած են զանոնք, ոչ եթէ մէկ՝ այլ
երբեմն նաև երկու երեք զանազան բա-
ռով^{1:}: Աս անգամ ընծայենք 'ի վայելս

¹ Օրինակի համար յիշենք ինքարոյս բառը որ
վերջն ժամանակներս յարմարցուած է թարգ-
մանելով Տաճկին Կիբար Առաջածը փոխանակ
հին խոնրէ բառին (գլ. Dictame). ոմանք բաւ-
նի կոչած են րիօն խոռոը որ, ըստ մեր բժշկարա-
նաց կ'ըսուի պէտականայութ: Asthme ըսուած հի-
ւանդութեան դժուարացնութիւն, ծանրացնութիւն
հասարակ անունը արուած է, մինչդեռ հիները
կ'ըսեն վայ: Étamine ծալիկներուն արու գոր-
ծարանը ըստ նախնեաց կ'ըսուի որչայ, զոր մենք
անուանած ենք առէլք: Basterne ըսուած Դ գա-
րու գեսապակին արուած չէ հայկական անունը
բառիկն զոր գործածած են Ոսկեբերանի թարգ-
մանիցիւ Եղիշէ, գեսպակի և չէ թէ գանքէի մըտ-
քով, և այն և այն: Խակ մի և նոյն բառին այլ և
այլ անուններ ունենալուն համար յիշենք միայն
պայի վելան որ կ'ըսուի Սոսորդ, Լեզուակ, Մա-
կալեզու (յունական), Խաղողիկ, Զանգիկ, Խըն-
ծորք, Զանձողիք, Կատիկ որ և Գթիկ: Դեռ ու-
րիշ շատ օրինակներ ալ կան, զորոնք համասո-
տութեան համար զանց կ'ընենք յիշել:

բանասիրաց ձիաբուծութեան վրայ
գրուած երկու փոքրիկ հատուածներ,
որոնցմէ մէկը կ'երևի թէ գաղղիերէնէ
թարգմանուած է մէջը նոյն լեզուով
գտնուած այլ և այլ բառերուն համար,
իսկ միւսը ըստ ամենայն հաւանակա-
նութեան՝ յարաբերէնէ: Առաջինը մա-
գաղաթի վրայ մաքուր գրուած տետ-
րակ մըն է որ դժբաղդաբար կը պակսի
մէջտեղէն և վերջէն. երկրորդը շատոն-
ցուընէ ծանօթ վաստակոց գրքէն է^{1:},
Մեր գիտութենէն դուրս մնացած բա-
ռերը զորոնք չկրցանք ճշդել կը ձգենք
հմտագունից:

Հ. Յ. Թ.

Ի գրաստուն բժշկարանէն փոխած.

Ա. Յաղագս կաղնալոյ.

Գրաստուն կաղալն երկու ցեղ է. է
որ 'ի ծածուկ կաղայ և է որ յայտնի.
և որ կամենա ճանաշել այս է նշանքն.
որ 'ի մէկ ոտիցն կաղայ՝ նա 'ի զիսոյն
շարժելն ճանշուի և 'ի կալօփցնելն^{2:}.
և յորժամ հալծեցնեն զձին և կանգնե-
ցնեն որ պաղէ և ձեռօք վնդուն յերին
և 'ի ծունկըն և 'ի կոճքն և 'ի սմբակըն

1 Անցայս ձեռագիրներու կարգը պէտք է գա-
մենք նաև ձիերուն պայտ զարնելու արուեստին
վրայ գրուած՝ մանաւանդ թէ ձից խօսելով
թարգմանուած գիրք մը զոր կը յիշատակէ Բա-
րիզու կայսերական մատենադարանին մէջ պա-
հուած Քիաբէտնութիւն անունով նօարագիր գըր-
քոյկ մը. « Եւ այս խրատնիս այլ 'ի հետ պող-
պատ շննելուն և մուս տալուն էր գրած 'ի նոյն
իմաստասիրացն Պարսից, զոր թարգմանեց Հե-
թում թագաւորն հայոց յորժամ գնաց ութե-
ասն հազար հեծելով 'ի վրայ թշնամոյն Սուլ-
տանին և կոտորեաց և սպառեաց զամենեսին, և
գնաց մեծաւ պատվով 'ի Պաղատատ առ Կսոր խա-
լիքայն և մեծ պարգևօք գարձաւ. և իմաստասէր
ոմն սարկաւագ Ստեփանոս անուն գտեալ առ
կայրն որ այնչափ ազգի ազգի գիր և լեզու ու-
սեալ նման առաջի փիլիսոփայիցն և ոչ կայր գիր
որ առ նմայ ոչ գտանէր. և նա սիրեցեալ եղե 'ի
հայոց թագաւորէն վասն հզօր գիտութեան, և
խնդրեաց յարբայէն և ետ թարգմանել երեք
գիրս վասն ձիյ պայշթարսման և վասն թրի շնն-
ցաւ և վասն արեգական և լուսնի արվեստին, և բե-
րեալ 'ի հայոց աշխարհս»:

2 Գլ. Galoper ձին շրս ոսքով վազնելն է:

և 'ի յետի ոտւին՝ նա երենայ թէ ուստի կու կաղայ . և յորժամ՝ ի դոյր քարուտ գետին կալօփցնեն՝ նաթէ 'ի սըմբակն կենա կաղութիւն նա երենա, և թէ զինի 'ի սմբակն՝ նա եթ ընդ դար 'ի վեր հանեն կամ որ 'ի սանդղմատն կոխէ նա 'ի վերայ բազկացն վախ հաստի . և յորժամ թապլի գրաստն՝ նա առաւել յայտնի կաղութիւնն . և երբ յանկասկած 'ի շուռ ածեն զգրաստն 'ի մէկ գեհն ու 'ի մէկ այլն՝ նա թէ 'ի կուրծքն կամ 'ի բէճքն կենա կաղութիւնն նա երենա :

Բ. Յաղագս Ֆընտուի .

Գրաստ որ ֆընտու լինի՝ հեայ խիստ և լարի պինչքն, թուլնա գլուխն և ամէն զօղվածքն, փայտնայ ոտպին, կտրի 'ի կերոյ և 'ի սկիզբն մինչև յերեք օրն շունչն տաք լինի և ապա պաղէ շունչն և այլընդի . աչվին խփի և դժար շարժի ամէն զօղվածքն, և տքալով գողէ և դժար քայլ փոխէ, և թէ ընկնի դժար ելնէ 'ի յոտն . և լինի որ քրտնէ անդմունքն :

Բժշկութիւնն է այս ցաւուս : — Երակն, և չորս օր չուտեցնել գարի . յետ չորս աւուրն կանգնեցնել զինք երեք օր 'ի գնացք ջուր, որ թաղվի ինչվի քովքն 'ի ջուրն, ու յամէն օր տարպա մի հանեն 'ի ջրէն և օծնեն ամպակ գինով և հոռօմ ձիթով աղէկ, ու մարձեն դէպ 'ի վայր . եթ ոտպին կակլնա ու լաւնա որ աղէկ քայլէ՝ նա անցմնցեցնեն ¹ ու արծեն :

Գ. Յաղագս Քամոյ և Ուռեցի որ չկարէ թրբել և գողել .

Նշանքն այս է : Գրաստն քթահրի ու ջանա որ նստի ու դառնա որ դէպ 'ի յետ հայի :

¹ Անցնել աս գրուածքէն դուրս ուրիշ տեղ աւ գործածուածքէն գուրու բժշկարանի մը մէջ . « Թե ունենա փուք և ձգոտուք՝ դուն տաս իրեն քամունիէն, և յետ երկու օրն հալծի անցնել թեթև ու յետ անցնցել խմէ դինին ա-

Բժշկութիւնն է : Ա՛ռ հին գինի լիտր երկու և ջուր լիտր տասն, լից 'ի վերայ և առ խողտի լիտր մի և անգուժատ դրամ տասն, ծեծէ զանգուժատն և խառնէ 'ի հետ քչիկ մի ալոյր ու խառնէ 'ի ջրած դինին ու եղկցոյ ու դիր հոռօմ դեղ . և ապա առ կանաչ գնձի ջուր լիտր մի և կէս և խմցո քչիկ քչիկ :

Դ. Յաղագս Թթի որ լինի 'ի գրաստուն տոշն կամ 'ի ձուքն .

Քաշեն ձար մի յագոյն ու կապեն զթթին տաքն պինտ ու թողուն հինգ օր ու ծխեն ներքև անծրութ ¹ . նա կտրի ու ընկնի : — Ա.յլ դեղ : Առնուն սօնօպրի կեղև դրամ հինգ, եփեն յամպակ գինի և ծփեն զտեղին :

Ե. Յաղագս Կոլընջի ² .

Նշանքն է որ թուլնա շնիքն, բռնվի զօղվածքն, դողայ, նստի ու թապլի և ելնէ 'ի բերնէն փրփուր :

Բժշկութիւնն է : Ա՛ռ թառանգութին ³ դրամ տասն, տրորէ զինք յերեք լիտր շողջուր ու լից ընդ փողքն 'ի վայր և անցմնցեցո, և թալթիսէ զձեռնդ 'ի մեղրն և 'ի ձէթն՝ և մտոյ 'ի գրաստուն որովայնն և սրբէ : — Ա.յլ դեղ : Ա՛ռ հայխունկ նուկի մի, լուէ ու մաղէ, ու առ մեղր դգալ երեք, հին գինի լիտր երեք, քայցախ դգալ հինգ, խառնէ ընդ իրար, երեք բաժին արա ու լից յամէն օր բաժին մի ընդ փողքն 'ի վայր, ծածկէ յեր և ած 'ի շուռ :

Նուշ երկու կթիսայ » : Վիպասանութեան մը մէջ ալ .

« Անցնել հետ ան լերանց հետ

կու աղօթէ գաղտուկ սալար,

հետ փառք տար Արտուծոյ

Որ զաս արմացքս աշխարհքս արար :

¹ Պրա . ինւերտ, գաղղիերէն sarcocolle ըսուած խէժնէ, զոր ատենգք կըգործածէին իբրև վէրքերու կցողական դեղ :

² Կոլնջ արաբերէն գուցնան բառն է որ կը նշանակէ թիկնացաւութիւն և ստէպ գահ կամ գահայաւ ալ կ'ըսուի :

³ Պրա . թերէնիւպին . մանանայ . « Ինքն զէտ եւ զեամն երկնից իշնու 'ի ծառերուն վրայ . լաւն այն

Զ. Յաղագս Փածպարի.

Նշանքն է որ 'ի շուկակն՝ 'ի նման լինի բայց չառնու զամէն ձեռն և ելնէ յիրմէ գիճութիւն և թարախ :

Բժշկութիւնն է : Ա՛ռ երակ 'ի բազկունքն ընդ ներքսէ և ընդ դրացէ, և լուս զիսոցն շողջրով սպիտիկ ու թող որ ցամքի . և առ մեղք դրամք քսան ու դդմի կտոր, այրէ որ լինի գործելի, լեսէ ու խառնէ հետ մեղքին ու կապէ քթեթով երեք օր . ու ապա բաց, թէ լինի ողջել՝ դու երկու երեք հետ այլ արա :

Է. Յաղագս Մկնատմերոյ².

Եփէ զօշնանն ու ջրովն լուս սպիտիկ ու ցամքեցո, ու օծնէ զինք քաղցր կարագով 'ի յօրն երկու տարպա . ու մի թամբեր ու հեծնուր ինչվի ողջանա :

Ը. Յաղագս Բռամատիսի³.

Նշանքն է որ իջնու ջուր 'ի քթէն որ լինի հոտած, և փափայ որ արցվէ աչքն :

Բժշկութիւնն է : Լից ընդ քիթն 'ի վայր մանուշկի ձէթ ու փորնկատացո երեք օր, ու խաչէ զաղի ձուկնն ու լից զլուրն ընդ քիթն 'ի վայր որ փորնկատա, ու ծխէ ընդ քիթն 'ի վեր՝ յատպէ⁴ ու խունկ :

Թ. Յաղագս Ֆարսնի⁵.

Ա՛ռ սպիտակ կեղեմինոր որ լինա

է որ նոր լինի և թաժայ : » Ամիրտոլվաթ, բժշկական բառպիլք :

1 « Սագու ճրագուն ոտացն և ձեռացն շուկան տանի » : Ամիրտ. բժ. բուգ. : Արբ. շագուն պատուածք, ձեղքուածք ըսել է :

2 Միասպան որ շատ անգամ կը գործածուի բժշկական գրոց մէջ ալ կ'երևայ թէ տեսակ մը պալար կամ ուռեցք կը նշանակէ :

3 Արբ. բէմէք աչքի ցաւ կը նշանակէ :

4 Յարզէ այսպէս կը մէկնուի Ամիրտոլվաթի բժշկական բառպիլքն մէջ . « Մոշու պտուղն է, և լաւն այն է որ նոր լինի և հով է : »

5 Ֆարչն, գլ. Farcein, ձիերուն տեսակ մը քուսութեան անունն է :

Հասել յինք ջուր, ու շփէ զֆարսնին ակներն աղէկ վաղն ու յիրիկունն, ու լուս զինք պախրի գոզով . նա ելնէ յիրմէ զեդ կորեկհատեր . և առ աղէկ կալեքար, լուսէ ու մեղէ ու 'ի վերայ ցանէ ու լուս զխոցերն վաղն ու յիրիկունն :

Ժ. Յաղագս Գայլցաւի .

Նշանքն է . լարի շնիքն և ակընջվին . քաշվի աշխցն սեռուցն որ սպիտկուցն շատ երենա, և փայտնա շնիքն որ չհանի 'ի գետինն, և կտրի յալկէ¹ և 'ի ջրէ . և պատճառն լինի 'ի հովէ և 'ի քրտնելոյ որ դիպի յինք քամի և պաղի և յայնոր որ յարեղակն կապեն :

Բժշկութիւնն է : կապէ զզրաստն 'ի մութնտուն², ու քերթէ զմաքին ու զմորթին շողշող հագոյ 'ի վերայ զիսոյն ու շնեցն, ու աղէկ կարէ, և զբուրդն 'ի դուրս արա և շողցոյ զարդար եղն ու լից ընդ ականջքն 'ի վայր ու օծնէ զամէն կոնակն ու զողնն ու զքովքն . ու տուր առվոյտ ու 'ի մօտ կեցիր ու բարձր կապէ որ չնատի . ու զմոշին ու զիսնկի փոշին ծխէ ներքեն . ու վառէ 'ի խէշն զմոշին կամ հայնց փայտ որ մուխ չայնէ, և լից ընդ փողքն 'ի վայր խանդիխունի³ շարապ . բժշկերն գիտեն : — Այլ գեղ : Ա՛ռ խողտի, փիճոյ խէժ, բնկի խէժ ու հոռօմ ձէթ . շինէ զայս օծնելիք⁴ ու օծնէ զգրաստուն ամէն մարմինն մազ ի վեր⁵ :

1 Աւէի անասնոց դարմանը կամ կերակուրն է . ը յօրուածին մէջ լսաւ « Կտրի 'ի կերոյ : »

2 Աս բառը ներսէս Լամբրոնացին ալ գործածած է Պատարագի Մեկնութեան մէջ, երես 416. « Փռանդն զաջ քահանային ողջունէ, և 'ի նա ամբառնայ զպատարագն, և զինդիրսն տանել առաջի Աստուծոյ . հայն 'ի նունդուն զողէ, և որպէս յաւազակ 'ի նա զտուրսն աւանդէ : » Վասակոց գրոց մէջ ալ հուն դուն և մինագոյն դուն կ'ըսուի (ՄԾԳ, 815) :

3 Խանդիխունի կամ խանդիչն ըստ Ամիրտոլվաթայ : « Ինքն շարպաթ մնէ որ մեղքով և հին գինով շինեն, և անուշահուս գեղեր կու խառնեն . տապ և չոր կու լինի բնութիւն, օգտէ ծերոց : »

4 Օճնելի+ . գլ. Onguent.

5 Մառ 'ի վեր . գլ. A contre-poil. առ. Աերու-

Ա. Ալ զեղ : Առ մոմ ու ձիթենոյ
խէժ, հալէ 'ի հոռօմ ձէթն և շինէ զեղ
մորհամ և 'ի բան տար :

Ի՞՞ս. Յաղապս Արօսիկ։

Նշանկըն է : Լինի 'ի սրօնկըն զեդ ու-
կոր ուռեց խիստ պինտ, և թէ 'ի զօդ-
վածն մոտէ աւիրի գրաստն :

Բժշկութիւնն է : Քրիզմէ զտեղն և
սպրկյո՞ի մաղէ , և ապա առ ակիչ որ
լայնքն սրօսին չքաք լինի , շանթցոյ և
կալ ընդգէմ յերակ որ խիստ տաքնա
սրօսն ու բոյթաւմն աճուէ ու տրորէ
սերտ յօրն երկու հետ . ու եթ լեղենաս
յաճուելն , գու լեսէ տաշեղ զառիկ ու
շաղէ ու ՚ի վերայ դիր սրօսին չքաք ու
կապէ . ՚ի յօրն երկու հետ արա զեղեղտ
ինչվի հալի սրօսն : —Ա՛յլ դեղ : Նոյն
նշանօքտ քրիզմէ և շողցոյ և աճուէ . և
առ անլուա սապոն ու մարդո խիզով
տրորէ ու ՚ի վերայ դիր . և այս կերպովս
արա մինչև հալի սրօսն . և քանի մատ-
դաշ լինի գրաստն նա շոյտ ողջանա :

Լ. Յաղագս նշանաց ճանաչելոյ զլաւ գը-
րաստն և զվատթարն .

Երեսն աւաղ^ւ, յակընջէ ականջ արձակ. բերանն մեծ. շրթունքն նօսր. քրթափողքն արձակ. դունչն ՚ի պախտեղոյն ՚ի վայր պարկեցտ. աչքն մեծ և յիստակ, և պտուղն թուխ, և յիրացմէ ՚ի հեռու, և կոպքն նօսր. ականջքն ՚ի ցից և յերկայն. տակքն բարակ մինչև ՚ի մօտ ՚ի մէջն և քանի ՚ի վեր երթանալ լայննա, և ծայրն սուր, և լինի ականջն պարկեցտ և նօսր և երբ բոնես պինտ. դուբէթն ^Դ կակուղ և յերկայն, և մանտը մազն որ ՚ի հետ կակապուղ, և

ՆԵ, ԳԻՒՀՆԵ: ՕՐԲԻՆԱԿԻՆ ԱԵՂ ՀՈՍՏԵՂ ՂԹՈՎՂԾ ԻՆ-
ԿԱԾ Է ՊՐԱՎ ԿԸ պակախն ՃԱ-ԻՑ ՎԼՈՎԻՆԵՐԸ:

1 ԳՂ. Suros ձիու սրունքն ելած պինդ ու-
ռեցքն է:

ՀԱ-ՊԱ որ և ունի իր բայն ալ Ա-ՊԱՒՆ ռամկօ-
ՐԵՆ լԵզուաւ կը նշանակէ ՆԻՀԱՐ, ՆԻՀԱՐՆԱՐ:

Յ Պատուի աշքին բիբն է . այս բառս ընտիր նախ-
նեաց դրոց մէջ ալ կը դանուի :

4 Պ. Toupet ձիուն ճակտին մազերն են:

Ա Այսինքն Երականին, Երակները:

2 ԵՐԵՒ-Ճ. ՊԼ. Poittrail. Ճիռան կուրծքն է :

Յ Օրինակը հոստեղ պակասաւոր կը լմւննայ :

Ի Վաստակոց գրոց

ՅԶ . Վասն ձիերոյ ազգաց և ցեղից մատակոց , յովտակաց և քուռկներոյ խրատ և բժշկութիւնք .

Պարտ է զձին երկու իրօք փորձել ,
մէկ՝ տեսակով , և մէկ՝ ներգործութեամբ .
զմղածքն ներգործութեամբ և հեծնելով է պարտ իմանալ , զգործքն թէ ժրար է , ամուր է և լաւ և զարմուհին՝ տեսակաւ միայն . և այս դժուարին է և արուեստիւ քան զներգործութեամբ և զհեծնելով ճանաչելն , վասն զի զօրութեամբ է , և ամենայն ոք զօրութեամբ իմաստասիրէ և սուրբ և արուեստաւոր . բայց 'ի ներգործութենէ կու լինի սղալումն . սոյնպէս և աստանօր զներգործութեամբ ճանաչելս պարտ է մեզ ցուցանել , հաւաստել ընթերցողացդ և հետեւողացդ պիտանի արուեստիցս : Նախ զգրաստն 'ի խրչելն է ճանաչել . թէ խրչան է՝ վատասիրտ է և պեղծ . և այլ նշան , թէ տեսնուս յօժարագնաց է և հանապազ ցանկայյառաջ դնալ քան զայլքն 'ի ճանապարհն՝ լաւ է և աղէկ , դնէ համարձակ : Հայեաց 'ի քուռկնին և տես . քուռակ որ երբ մայրքն 'ի ջուրն լինին 'ի դնալ և չհայի մօրն՝ յառաջ երթայ և ջուր առնու . խիստ աղէկ է . ապա որ կանգնի 'ի շքի կամ 'ի տեղուջ և մօրն և ընկերացն մնայ՝ վատ է , մի տիրանար . և այս զօրութեամբ է ճանաչել : Զհաստատած տաճիկ ձին այսպէս ճանաչէ . յառաջ պարտ է մեզ զգլսոյն նշաներն զրել և ապա զայլսն . զգլուխն չափաւոր տես 'ի մեծ և 'ի փոքր . հայեաց ընդ անձին մեծութիւնն և զգլուխն ընդ անձին մեծութեանն հայկայէ որ 'ի փոքրն լինի և ոչ 'ի մեծն . և զճակատն լայն , աչքն մեծ և թուխ և 'ի դիւրք . զերդ լապստկու , և կապիճք աչացն ոսկերքն 'ի լի և չոր ոսկորք 'ի դուրս . քթափողք արձակ և 'ի բաց , հանց որ մաշկերն լինի թոշմած , 'ի ցից լինի և 'ի բաց . բերանն մեծ և զճեղքածն չատ դիպան

'ի վեր , և լեզուն փոքր և նօսր , և կընդութն երկայն և վոզքթի չափն , և շընին բարձրահայեաց երկայն և բոլոր , և ճիտն բարակ հանց որ փողերակքն երկին և 'ի ցից լինին . և շնետակքն բարակ , և մէջքն լայն և ծայրքն սուր և 'ի ցից . և երեսն ցից , բաշն 'ի չափն և ձաղկ . կուրծքն լայն և տափակ , նոյնպէս և երբուծ ցած , որ չլինի բարձր զերդ այծու և զքաղիկսն ¹ յետս ընկենուն . բիճին ոսկըն լայն և մեծ 'ի վերայ մարմնոյն զուսր , և ծունկքն ուժով բոլոր 'ի չափն և զորդ , սրօնքն ցամաք և անմիս , դրացահայեաց ² և հեռույին բերաց , և զղերն հաստ և ուժով , և սրմբակն ոչ չատ տափակ 'ի չափն , և մէջն խորու , և գորտն փոս և անարատ և ամուր , և ջիկքն 'ի ցից և յերևան . ողնն դիւր և զորդ , և կուշտքն ցամաք և կողքն 'ի դուրք ըստ չքացն . և փորն ըստ կաւղաւն ³ որ չլինի զերդ պախրէի . յայդ 'ի յայծմանն հայեց . քովակն բոլոր և խընձորք անդմին 'ի դուրք , պղճուկն հաստ և երբ բռնես պինդ 'ի լար , և ագին յերկայն և հաստ և ձաղկ . անդամունքն մեծ և մնալի՝ բոլոր զերդ այծու որ չլինի տափակ զերդ եղին կամ խողի . կարթքն լայն ըստ չափուն , և կարթուցն ըստոցն դուր որ չլինի անգոյն կամ ըստունգն , թէ ոչ՝ պեղծ է . շնդքն յերկայն 'ի վայր յանդամոցն , և կոճքն 'ի ցից որ էջ չլինի , և սմբակն լայն քան զառաջինք և 'ի դրահայեացք , որ երբ քայլէ 'ի դուրս ուրորի անդամն և ոչ 'ի ներքս որ զիրար ծեծէ . և ձութն սութով և հաւկիթն մեծ և պինդ , և հաւկիթի բնաշնդքն հաստ և ուժով , և տոշն 'ի չափն 'ի մեծն և 'ի փոքրն և վազան ,

¹ Ուրիշ օրինակի մը մէջ ալ այսպէս գրուած է որուն նշանակութիւնը մեզի անծանօթ կը մընայ : Վիպասանութեան մը մէջ ալ կը կարդանք .

« Իչիր 'ի քո ձիուն »

Ու զեր աւագն աղուոր պնդէ ,

Ալլա հեծիր ան ձին »

Ան կարմիրամբն որ քեզ վալէ : »

² Դրացահայեաց և քիչ մը ետքը Շբահայեաց ըսելէ է գեալ 'ի դուրս ելած , ծռած , որ դուրս կը նայի :

³ Երկու օրինակներուն մէջ ալ այսպէս է . կերւայ թէ խանգարմունք կան հոստեղ :

որ յինի բոլօճ¹, և թէ ոչ՝ սիրտն գերդ
բոլօճի լինի:....

ՅԺԴ. Վասն դեղերոյ և ցաւոց որ ըն-
ծայի ՚ի գրաստքն .

ԵՐԲ զգրաստն տխուր տեսնուս՝ ըդ-
գարին ծեծէ և զփշքն հան և ցորենն
աղնձէ. հինգ զգարին և մէկ զցորեն
յիրար խառնէ և տուր որ ուտէ՝ օգտէ,
և ճիճն ջրէ. և թէ այլ յերկարէ՝ թեփ
խառնէ և տուր և ջրով թաց, և ոմանք
քուշնայ խառնեն:

ՅԺԴ. Յաղագս տաքութեան գրաստուց .

Թէ ձմեռն հանդիպի՝ լուայ զինքն
շող ջրով և աղէկ ծածկէ որ չհովնայ և
ջեր կալ. և քուշնայ ընդ ցորենն խառ-
նէ և տուր որ ուտէ, և եղկ ջուր տուր,
և հոռոմ ձէթ և գինի խառնէ և օծնէ
զանձն և զփորն լուծէ գեղով, և ՚ի
ջլացն և ՚ի բազկացն արիւն հան և ըդ-
ծունկքն և զոտքն քաջ քացախով լուայ
պինգ, և թէ օգտէ՝ այլ լուայ շող ջրով,
լաւանայ Աստուծով: Եւ թէ տաքու-
թիւնգ ՚ի շատ հալածանաց գայ ձիոյն՝
առ այծու կաթ փարչ մի և չորս հաւկիթ-
և հոռոմ ձէթ որ կծու շինի և նշայ²
ափ մի, յիրար խառնէ և անմեռլի ջուր
քանի մի կաթ, և ընդ բերանն ՚ի վայր
ած երեք օր, օգտէ: Եւ թէ տաքու-
թիւնգ իջուածք այլ հանդիպի որ իջնի
՚ի փողքն և ՚ի տաքութենէ լինի, առ
դաղձին ջուր և մանր աղ և հոռոմ ձէթ
և օծնէ զիսամծէքն³ և զփողքն, և շող
ջրով զոլոքներն լուայ աղէկ. և առ շըն-
խաղող և անուշ գինեմրուր և զլեզուին
աթոռքն⁴ շփէ և զթուշքն. և թէ ընդ բե-
րանն ՚ի վայր երթայ՝ աղէկ է, և թէ
ընդ քիթն արիւն գայ՝ կանաչ դնձի ջուր
արկ ՚ի քիթն ՚ի վայր, լաւ է և աղէկ :

1 Ըստ Խոտրջրեցւոց՝ ՚ի բնէ կուրտ կամ ան-
կարող կը նշանակէ այս բառը:

2 ՏՀ. Նիշանիւ:

3 Խամծէն զորուրիշ տեղ կը գտնանք նաև գը-
րուած խամծէն, խամծէր, խամծէն, կզակն է:

4 Կըսուի նաև լեզուանուու, ինչպէս ակոնցաց ա-
նուու և ականջնուու. լեզուին արմատն է:

ՅԺԴ. Յաղագս աշխցն թէ ցաւի .

Թէ սպիտակ է՝ առ հայսնկի փոշի և
նշայ և գառան զլիսոյ ուղեղ վեց վեց
տրամ, զաֆրան և ծովու փրփուր եր-
կու տրամ, վարդի ձէթ հնդետասան
դրամ և չորս ձուի սպիտակուց և յիրար
խառնէ լսած մանտր և ՚ի գեղ դիր և ՚ի
յաշքն քաշէ, օգտէ: Եւ թէ սպիտակ կե-
նայ առ անդրանի աղ լսած և մանր մա-
ղած և յիստակ մեղր խառնէ և ՚ի յաշքն
դիր, և թէ կարագ այլ խառնես աղէկ
է, և թէ ծովու փրփուր և անդրանի
աղ բարակ մաղած միաշափ և մասու-
րայով ՚ի յաշքն փշես՝ օգտէ: ...

ՅԺԳ. Վասն խոստուկի .

Լուա զձին տաք ջրով և թէ բաղա-
նիք ուրդի՝ այլ աղէկ. և առ մուր հինգ
տրամ և անուշ հին գինի կէս կուժ և
հոռոմ ձէթ կէս նուկի, և արա երկու
բաժին և զամէն բաժինն ընդ բերանն
կամ ընդ քթափողքն խմցուր, և տաք
ջրով և թէ ծովու լինի լաւն այն է, ծփէ
զփորն աղէկ, և թէ հապալաս և զաղձ
ջրով եփես և ծեփես՝ օգտէ. և թէ նռան
կեղնն լսես և ջրով խմցնել տաս օգ-
տէ. և քրէֆսի¹ հունգ և կօդայի² հունտ
լսես զինով և մեղրով տաս օգտէ, և
թէ հալհաւիճէ լսես և գինով տաս՝
օգտէ: ...

ՅԻԱ. Վասն ձիոյ ողնտեսի .

ԱՌ միտի տակ որ է վրացի կոճն,
այրէ և լսէ և ՚ի վերայ ցանէ. և թէ
առնուս կանփի հունտ և աղաս և ցա-
նես ՚ի վերայ՝ օգտէ: ... Այլ և գեղորայք
որ զջեղն կակզացնէ ըստ կարգին պա-
կասէր չզրեցաք:

1 ՏՀ. Քերէվէր:

2 Պըս. Քէպիւ. գդում կամ գդմի տեսակ մը: